

Շուշիի ճարտարապետական վարչության համալրում

Շուշիի հարուստ պատմաճարտարապետական ժառանգությունը պահպանելու, վերականգնելու, քաղաքի բնութագրին համահունչ ժամանակակից կառուցապատում իրականացնելու և վերահսկելու համար անհրաժեշտ են բարձր որակավորում և մասնագիտական փորձ ունեցող ճարտարապետ-ուրբանիստներ: Հասկանալի պատճառներով նման փորձագիտական ուժեր Շուշիում և, թերևս, ԼՂՀ-ում չկան:

Մասնագետների բացակայության պայմաններում Շուշիի կառուցապատումը ազատագրումից ի վեր տարերային է եղել և հաճախ խաթարել է քաղաքի պատմամշակութային բնութագիրը:

Իրավիճակը շտկելու համար Հիմնադրամը 2007թ. իրականացնում է տեխնիկական օժանդակության ծրագիր, որի շնորհիվ Շուշիի ճարտարապետաշի-նարարական վարչությունը համալրվել է որակյալ ճարտարապետով, ով Հիմնադրամի կողմից երկարատև գործուղման է ուղարկվել Շուշի:

Ի լրումն, Հիմնադրամը վարչությանը տրամադրել է համակարգչային տեխնիկա և ծրագրավորման միջոցներ տեղանքը քարտեզագրելու և նյութերը թվայնացնելու համար: Ծրագիրն իր բնույթով շարունակական է, և կիրականացվի նաև 2008թ. ընթացքում: